ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Փայլակ Աշոտի Ենգոյանի ««Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքական հայեցակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացված ««Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքական հայեցակարգում» թեմայով ատենախոսությունն արդիական ու ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որի գիտաքաղաքական արժեքն ու պատմաքաղաքական նշանակությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է փաստել, որ նշյալ ոլորտում գիտահետազոտական ուսումնասիրություններն առավել արդիական են և պետք է արժանանան պատշաճ ուշադրության: Այս տեսանկյունից ատենախոսությունն արժեքավոր է, քանի որ անդրադառնում է «փափուկ ուժի» ժամանակակից հայեցակարգի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային քաղաքական հիմնական դերակատարների կողմից վերջինիս դրսևորման առանձնահատկություններին և կիրառման գործիքակազմին:

Ատենախոսության մեջ համակարգված կերպով հեղինակն առաջին անգամ անդրադառնում է Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության փոխակերպումներին՝ շեշտադրելով վերջինիս մշակութային-արժեքային բաղադրիչը, վերլուծում է «փափուկ ուժի» քաղաքականության չինական և արևմտյան մոդելների գործիքակազմերի տարբերությունը: Ատենախոսության գիտագործնական նշանակության դիտանկյունից հատկանշական է հարավկովկասյան տարածաշրջանում Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության իրականացմանն առնչվող ենթագլուխը: Հատկապես գնահատանքի է արժանի ատենախոսի կողմից Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության այն գործիքակազմի վերհանումը, որ կարող է կիրառելի լինել նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման համար:

Միաժամանակ հարկ է նշել, որ ատենախոսությունում առաջադրվում և համակողմանի հիմնավորվում են մի շարք տեսական դրույթներ, որոնք նորովի են գնահատում «փափուկ ուժի» հայեցակարգի վերաբերյալ առկա մոտեցումները: Առանձնակի ուշադրության է արժանի մի շարք հետազոտողների կողմից առաջադրված «փափուկ ուժի» հայեցակարգերի համեմատական վերլուծությունը (Ջ. Նայի, Ա. Գրամշիի, Ժ. Լիպովեցկիի, Ժ. Բոդրիարի և այլոց), որը թույլ է տվել հեղինակին վերհանել «փափուկ

ուժի» կոնցեպտի հիմնական դրույթները: Պետք է նշել, որ ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ատենախոսի ընդունակությունն ու հմտությունները լիովին բացահայտվել են հատկապես տեսական և մեթոդաբանական սկզբունքների համադրության ճանապարհով քննարկվող հիմնահարցերի սահմանների ճշգրտման և դրա հիման վրա հետազոտական նպատակների ու խնդիրների հստակ սահմանման տեսքով:

Ատենախոսության **առաջին գլխում՝** ««Փափուկ ուժի» հայեցակարգի տեսամեթոդական հիմքերը», հեղինակը համապարփակ և հանգամանալից վերլուծել է «փափուկ ուժի» ժամանակակից հայեցակարգի ձևավորման էվոլյուցիան և առանձնահատկությունները, ինչպես նաև համաշխարհային քաղաքական հիմնական դերակատարների կողմից վերջինիս կիրառման գործիքակազմը:

Հենվելով աղբյուրագիտական լայն հենքի և հարուստ գրականության վրա՝ հեղինակը բերում է համոզիչ փաստարկներ և հիմնավորումներ առ այն, որ «փափուկ ուժի» կոնցեպտը ժամանակակից միջազգային հարաբերությունների բազմաբևեռ համակարգի անքակտելի մասն է կազմում: Ուսումնասիրելով «փափուկ ուժի» կիրառման ամերիկյան, բրիտանական, եվրոպական, ռուսական ռազմավարությունները, որոնք հիմնական շեշտադրումն անում են «փափուկ ուժի» կոնցեպտի քաղաքական, կրթական համակարգերի, ինչպես նաև ազատական արժեհամակարգի վրա, հեղինակը բացահայտում է ՉԺՀ «փափուկ ուժի» քաղաքականության կիրառման մոտեցումները, որոնք «փափուկ ուժի» դիտարկում են ոչ միայն որպես արտաքին, այլև ներքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ գործիք:

Ուշագրավ է նաև միջազգային քաղաքական դերակատարների կողմից «փափուկ ուժի» կիրառման փոփոխությունների վերաբերյալ հեղինակի մոտեցումը, որի հետևանքով, ինչպես նշում է ատենախոսը, արդի միջազգային հարաբերություններում «փափուկ ուժը» փոխակերպվել է «խելամիտ ուժի»:

Ատենախոսության **երկրորդ գլխում՝** ««Փափուկ ուժը» որպես Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության կարևոր բաղադրիչ», համակողմանի և խորքային գիտական վերլուծության են ենթարկվում ինչպես ՉԺՀ-ի ժամանակակից արտաքին քաղաքական հայեցակարգի ձևավորման գործընթացը, այնպես էլ չինական «փափուկ ուժի» մշակութային և արժեքային հիմքերն ու վերջինիս առանձնահատկությունները: Ուշագրավ է նաև ատենախոսի անդրադարձը «ներդաշնակ աշխարհ» կառուցելու Հու Ձինթաոի, իսկ հետագայում «ընդհանուր շահերի հանրույթի» մասին Սի Ծինփինի տեսություններին, որոնք արտացոլվեցին ՉԺՀ արտաքին քաղաքականության օրակարգում:

Երրորդ գլխում՝ «Չինաստանի «խելամիտ ուժի» կիրառումը ժամանակակից փուլում», ատենախոսը հանգամանորեն անդրադառնում է Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» մեգածրագրի էությանն ու վերջինիս աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նշանակությանը: Այս համատեքստում առանձնակի կարևոր են

հեղինակի կողմից «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի իրականացման համատեքստում Ռուսաստան-Արևմուտք առճակատման հետևանքների, ինչպես նաև Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային դերակատարի դերի ու նշանակության ավելացմանն ուղղված վերլուծությունը:

Գնահատանքի է արժանի նաև այն հանգամանքը, որ համակարգված կերպով հեղինակն առաջին անգամ վերլուծության է ենթարկում Հարավային Կովկասի ներգրավվածության առանձնակատկությունները նշված նախագծի իրականացման համատեքստում: Ատենախոսը համառոտ, սակայն բավականին խորը ընդգրկումով է ներկայացնում Հարավային Կովկասի բոլոր պետությունների մասնակցության առանձնահատկությունները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծում, վեր է հանում տրանսպորտային և լոգիստիկ ուղիների գործարկման և այլընտրանքային ճանապարհների կառուցման տնտեսական և քաղաքական նշանակությունը: Հեղինակը քաղաքագիտական վերլուծության տեսանկյունից հիմնավորում է այն դրույթը, որ Հայաստանում կառուցվող Հյուսիս-Հարավ մայրուղին շարունակում է ունենալ բոլոր հնարավորությունները դառնալ այլընտրանքային ճանապարհ և մաս կազմել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծին: Ատենախոսությունում քննարկվում են նաև հայ-չինական հարաբերությունների զարգացման դինամիկան, ինչպես նաև այն ոլորտները, որոնք ունեն զարգացման իրական ներուժ և հնարավորություններ:

Գործնական նշանակության տեսանկյունից առավել արժեքավոր է ատենախոսության այն ենթագլուխը, որն անդրադառնում է Հայաստանի կողմից «փափուկ ուժի» չինական գործիքակազմի կիրառման հեռանկարներին, ինչպես նաև Հայաստանի և Չինաստանի կողմից կիրառվող «փափուկ ուժի» քաղաքականության ընդհանրություններին:

Ատենախոսության գիտական արդյունքներն ու նորույթն արտացոլված են համապատասխան եզրակացություններում, որոնք բխում են առաջադրված հետազոտական խնդիրների պարզաբանումից:

Ատենախոսության մեջ ձևակերպված հետևությունները, ընդհանրացումներն ու եզրակացությունները, ինչպես նաև ներկայացված գործնական առաջարկությունները փաստարկված են, աչքի են ընկնում տրամաբանական հետևողականությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Դրանք արդիական են և կարող են հանդես գալ որպես համակարգված և համակողմանի հիմնավորված քաղաքագիտական մոտեցում:

Դրանցից կարևորում ենք հետևյալները.

- Եթե արևմտյան երկրները իրանց «փափուկ ուժի» ռազմավարության շրջանակներում քարոզում են նրանց քաղաքական համակարգը, ապրելակերպը և ազատական արժեհամակարգը, որոնք հիմնված են, որպես կանոն, մարդու իրավունքների և ժողովրդավարական սկզբունքների վրա, Չինաստանը, ի տարբերություն Արևմուտքի, իր «փափուկ ուժի» ռազմավարության մեջ շեշտադրումը դնում է քաղաքակրթության, պատմության և լեզվի հարստության վրա:

- Չինաստանի ղեկավարները հասկանում են, որ հնարավոր չէ երկիրը վերածել գլոբալ բևեռի առանց խոշորագույն տարածաշրջանային կենտրոն դառնալու: Այդ իսկ պատճառով վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը սկսել է ակտիվանալ կարևորագույն արտաքին քաղաքական նպատակների իրագործման հարցում՝ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցության խորացում, տնտեսական ինտեգրման աշխուժացում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ:
- «Փափուկ ուժը», առավել ևս, եթե այն ուղղված է «դեպի ներս», անհաժեշտ է դնել համակարգված գաղափարական հիմքերի վրա, հակառակ դեպքում «փափուկ ուժի» արդյունավետությունը շատ ցածր կլինի: Մասնավորապես, Հայաստանի «փափուկ ուժը» պետք է հինված լինի այնպիսի գաղափարների վրա, որոնք հայ ժողովրդին օժտում են աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկի կարգավիճակով: Հայ ժողովուրդը պետք է ներկայանա ոչ թե որպես մշտական փորձությունների ենթարկվող ազգ, այլ որպես ժողովուրդ, որը ձգտում է գիտակցել իր դրական դերը մարդկության զարգացման գործում: Գաղափարական այսպիսի կողմնորոշումը հնարավորություն է տալիս համախմբելու ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլև աշխարհասփյուռ հայությանը:
- Չինաստանի «փափուկ ուժ» կիրառելու հաջող փորձը կարող է օգնել Հայաստանին, մի կողմից, սերմանել ազգային ավանդական արժեհամակարգը հենց Հայաստանում՝ ժողովրդի ինքնությունն ու միասնությունը պահպանելու համար, մյուս կողմից, զարգացնելու հարաբերություններն իր Սփյուռքի հետ, որը հինգ անգամ ավելի մեծ է, քան բուն Հայաստանի բնակչությունը և գտնվում է բոլորովին այլ սոցիոմշակութային միջավայրում, ինչի պատճառով օրակարգային է դառնում սփյուռքի ներկայացուցիչների շրջանում հայապահպանության հարցը և պատմական հայրենիքի հետ հոգևոր-մշակութային կապը պահպանելու խնդիրը:

Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով: Այն հնարավոր է դարձել հեղինակի կողմից սկզբնաղբյուրների համալիր ուսումնասիրության և գիտական շրջանառության մեջ դրված մի շարք նոր փաստագրական նյութերի շնորհիվ, որոնք համադրվելով այլ աղբյուրների հետ, ուշագրավ դիտարկումներ և սեփական եզրահանգումներ անելու լայն հնարավորություն են ընձեռնել:

Ակնհայտ է, որ պաշտպանության է ներկայացված քաղաքագիտության համար հետաքրքրություն ներկայացնող աշխատանք, որը, սակայն, զերծ չէ, որոշակի բացթողումներից, մասնավորապես՝

1. Ատենախոսը խորը և համապարփակ ընդգրկումով վերլուծել է չինական «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման մեթոդները և հիմնական գործիքակազմը՝ շեշտադրելով հիմնականում վերջինիս մշակութային և կրթական բաղադրիչները, որպես չինական «փափուկ ուժի» իրականացման արդյունավետ գործիք: Միաժամանակ ցանկալի կլիներ, որ հեղինակն անդրադառնար նաև

ՉԺՀ-ի կողմից տրամադրվող հումանիտար և զարգացմանն ուղղված աջակցությանը ինչպես ասիական պետություններին (Մյանմար, Ինդոնեզիա, այլ), այնպես էլ այլ երկրներին (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը), որը նույնպես չինական «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման արդյունավետ գործիքներից մեկն է:

2. Անդրադառնալով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի իրականացմանը և Հարավային Կովկասի երկրների հնարավոր և արդեն հաստատված մասնակցությանը՝ ատենախոսն իրավացիորեն այն դիտարկում է ավելի լայն՝ Չինաստան-Թուրքիա վերջին տարիներին հատկապես ենթակառուցվածքային նախագծերի համագործակցության դինամիկ զարգացման համատեքստում: Միաժամանակ կարծում ենք, որ այս համատեքստում դիտարկման արժանի էր նաև Չինաստան-Իրան ռազմավարական նշանակություն ունեցող հարաբերությունները, մասնավորապես դեռևս 2021թ. մարտին երկու երկրների միջև կնքված 25-ամյա համապարփակ համաձայնագիրը, որն առանցքային նշանակություն ունի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի իրականացման համատեսքտում: Փաստացիորեն այս համաձայնագրով Իրանը դառնում է չինական մեգանախագծի համար տարածաշրջանային հանգույց՝ նախատեսելով կառուցել մի շարք ենթակառուցվածքներ, որոնք իրենց հերթին Իրանին ելք են ապահովելու դեպի Հնդկական օվկիանոս:

3. Իրավացիորեն նշելով այն հանգամանքը, որ ՉԺՀ-ն գիտակցում է իր շահերի լոբբինգի իրական հնարավորությունները չինական սփյուռքի բնակության երկրներում, ինչը չինական սփյուռքը դարձնում է չինական քաղաքական հնարավորություններն իրացնելու կարևոր գործոն, ատենախոսը գալիս է այն եզրահանգմանը, որ սփյուռքի հետ հարաբերություններում Չինաստանի հաջող փորձը կարող է օգնել Հայաստանին զարգացնելու հարաբերություններն իր սփյուռքի հետ, որը հինգ անգամ ավելի մեծ է, քան բուն Հայաստանի բնակչությունը (տե՛ս էջ 143): Տեսականորեն համաձայն լինելով այս մոտեցման հետ, կարծում ենք, որ ժամանակակից չինական սփյուռք – ՉԺՀ և հայկական սփյուռք - ՀՀ հարաբերությունները փոքր-ինչ համադրելի չեն միմյանց հետ: XX դարում չինական էմիգրացիաի երրորդ լայնամասշտաբ ալիքը սկիզբ է առնում 1980-ական թվականներից, այնինչ ժամանակակից հայկական սփյուռքը ձևավորվել է հայկական անկախ պետականություն ունենալուց տարիներ առաջ: Հայկական սփյուռքի քաղաքական օրակարգը ոչ միշտ է համահունչ ՀՀ քաղաքական օրակարգի հետ և հակառակը: Ինչպես շատ ճիշտ նշում է ատենախոսը՝ չինական սփուռքը շատ սերտ համագործակցում է թե ՉԺՀ-ի իշխանությունների հետ՝ ստեղծելով տարբեր լոբբիստական խմբեր (տե՛ս էջ 152): Այս իմաստով, կարծում ենք, որ նախևառաջ, անհրաժեշտ է ձևավորել Հայաստան-Սփյուռք քաղաքական օրակարգ, մշակել առաջնահերթությունների

շրջանակ և սփյուռքի համապատասխան կառույցների հետ համակարգված գործել սահմանված նպատակներին հասնելու համար:

Այնուամենայնիվ, վերը նշված մասնակի թերություններն ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով այս հանգամանքը գտնում եմ, որ Փայլակ Աշոտի Ենգոյանի ««Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքական հայեցակարգում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակնպ արժանի է ԻԳ.00.01 – «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքագիտության
ամբիոնի ասիստենտ, քաղաքական
գիտությունների թեկնածու՝ Կ.Գ. Խոջայան

Քաղաքական գիտությունների թեկնածու Կ. Խոջայանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու,
ասիստենտ՝ Մ.Վ.Հովհաննիսյան

ք. Երևան
24.08.2022թ.